

Շուշանիկ Կուրղինյան

Ինքնակենսագրություն

Ես ծնվել եմ 1876 թ, օգոստոսի 18-ին, Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքում, արհեստավորի ընտանիքում:

Գրագիտություն ինձ սովորեցրել են կույսերը, որոնց ազդեցությանն եմ ես վերագրում իմ այն ժամանակվա կրոնասիրությունը: Տարրական կրթություն ստացել եմ տեղական հայկական դպրոցներում և ռուսական պրոգիմնազիայում . . .

1893 թ . ես ընդունվում եմ հայկական սոց<իալ> դեմոկրատական Հնչակյան կուսակցության անդամ:

Աշնանը կազմակերպում եմ հեղափոխական խմբակ (եթե չեմ սխալվում՝ առաջինը) 18 հայուհիներից բաղկացած, իսկ <18>94 թ . գարնանը պատրաստվում եմ փախչել Հայաստան և աջակցել նրա ազատագրմանը թուրքական լծից:

Ես անսահմանորեն սիրում եմ աշխատանքը և նրա անմիջական արտահայտման մոմենտները: Ամառվա արձակուրդների ընթացքում ես աշխատում էի անայնագործ ջուլհակի հետ, պրիմիտիվ հաստոցի վրա, ոտքերս կախած սառը փոսի մեջ: Աշխատում էի բրուտի կնոջ մոտ՝ կավից ծեփելով կճուճներ, թոնիրներ, գնում էի «դեպի ժողովուրդը» անվարժ ձեռքերով, ստանձնելով դաշտային ծանր աշխատանքներ:

Յատուկ Պոէմ

Պատահում էր հայրս խնայողության համար իր «գործարանը» փոխադրում էր տուն, ես աշխատում էի նրա մոտ գործավարձով, պահանջելով իմ աշխատավարձը մինչև վերջին կոպեկս: Այս բանը նահապետական ավանդություններով դաստիարակված մայրս համարում էր «անհարկի վերաբերմունք դեպի ծնողը և վերագրում վատ գրքերի ազդեցությանը»:

Դեռ այն ժամանակ ինձ ապշեցնում էր մարդկանց անհավասարությունը:

Մաշիկ կարող հայրս աշխատելով վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, վաստակում էր շաբաթը մի քանի ռուբլի, նրա ենթավարպետը՝ մեկ ռուբլի քսան կոպեկ, տղան՝ հինգ կոպեկ, իսկ վաշխառուն՝ բոլորից շատ և այն էլ առանց աշխատելու: Նա ինձ մխիթարում էր, որ բոլորի համար հավասարությունը հանդերձյալ կյանքն է, երկինքը:

1896 թ. տեղական փոխանորդի օգնությամբ պատրաստվում եմ գնալ Թիֆլիս, Մոսկվա սովորելու: Ուղևորությունը չի հաջողվում. փոխանորդին վտարում են «ոչ այնքան հեռավոր վայրեր» հեղափոխական արարքների համար:

1899 թ. օգոստոսի 15-ին լույս տեսավ իմ առաջին բանաստեղծությունը. ես ռուսահայերի մեջ առաջին բանաստեղծուհին եմ: Լիրիկական երգերում գովերգում եմ իմ բազմաչարչար ժողովրդի վիշտը, իմ հայրենիքի ձյունածածկ լեռները և հորդառատ գետերը. . .

1903 թ. ես տեղափոխվում եմ Ռուսաստան: Դա մասսայական գործադուլների ժամանակաշրջանն էր հարավում: Հիշում եմ, գարնանային խաղաղ երեկո էր, ես երեխաների հետ, կարկանդակի կապոցը ձեռքիս դուրս եկա խանութից: Մրից սևացած մարդկանց բազմությունը, կապույտ, յուղոտված բլուզներով, հզոր երգերով և կարմիր դրոշակներով մեծ փայտերի վրա, կուռ շարքերով գալիս էր կայարանից:

Ովքե՞ր են դրանք, հարցնում եմ գոգոլյան տիպի ծեր ինտելիգենտից:

Ռուս պրոլետարիատը. . . Տեսնո՞ւմ եք, ցույց է: Երեկ թռուցիկ են բաց թողել, իսկ այսօր իրենց են ցույց տալիս:

Իսկ ի՞նչ են ասում նրանց թռուցիկներում, հետաքրքրվում եմ ես:

Պահանջում են 8 ժամյա աշխատանքային օր և որպեսզի գործարանատերը իրենց հետ խոսի «Դուք»-ով, քմծիծաղ է տալիս նա:

Մայիսի 1-ին բանվորների կուռ շարքերը ինչպես տարերք, ինչպես ալիք, ինչպես կատաղի հոսանք տիրաբար առան ինձ ու տարան . . .

Ուշ երեկոյան վերադարձա տուն հոգնած, փոշոտված, վերածնված, և ես նկատեցի, որ իմ սրտի, հոգու լավագույն մասը մնաց նրանց հետ անվերադարձ, հավիտյան . . .

Այն ժամանակից բանվորների ելույթները, միտինգները, ցույցերը, մանիֆեստացիաները, ժողովները ինձ վրա ունենում են մոգական ազդեցություն, և ես գնում եմ նրանց ետևից, նրանց կողքով, առերևույթ նրանց օտար, սակայն բոլորից մոտ . . .

1901 թվականը իմ վերածնման տարին էր: Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատը բաց արին իմ առաջ պրոլետարական իմաստության բոլոր թաքստոցները և իմ հայրենիքի երգերը օրեցօր նսեմանում էին:

1907 թ . Ն . Նախիջևանում հրատարակվող «Նոր կյանք» հանդեսի դեկտեմբերյան № 27-ում լույս տեսավ «Հանգցրեք ջահերը» իմ հայտնի պրոլետարական բանաստեղծությունը, այնուհետև «Արշալուսի ղողանջները»՝ իմ առաջին ժողովածուն:

Ես բանաստեղծներից ամենաերջանիկն եմ: Իմ երգերը համարձակորեն գնում են խրճիթները, ֆաբրիկաներն ու գործարանները; Պրոլետարիատի գիտակից մասի հետ ես կապված եմ պայքարով, գալիք լավագույն օրերի հույսով . . .

1917 թ . հեղափոխությունը ես դիմավորեցի Ուկրաինայում: Դարձյալ ես նրանց հետ եմ, առերևույթ նրանց օտար, բայց բոլորից մոտ . . .

Իմ երգերը չեն գնում ռուսական և ուկրաինական խրճիթները ու գործարանները, որովհետև ես գրում եմ նրանց անհասկանալի լեզվով և չունեմ ունկնդիրներ . . .

Կեցցե՛ ռուս և ուկրաինական պրոլետարիատը:

Կեցցե՛ ամբողջ աշխարհի պրոլետարիատը:

Կեցցե՛ պրոլետարիատի դիկտատուրան:

1920 թ. Խարկով

Յատուկ Պոէմ